ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-L-24/2 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով
ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար լուսարձակների ձեռքբերման գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան 03.09.2024թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Մկրտչյան, Ա. Թումանյան, Ս. Գարանյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ա. Ազարյան
Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝ Գ. Սեփոյան

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Պետական վերահսկողական ծառայության գրության հիմքով պատասխանատու ստորաբաժանման կողմից ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-L-24/2 ծածկագրով ընթացակարգի հրավերում փոփոխություն կատարելու առաջարկի քննարկում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի հրավերի տեքստում փոփոխություն կատարելու մասին

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից ներկայացվեց, որ առաջարկվում է ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-L-24/2 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի մասից հանել «RLS8351 Tripod light Specification կամ համարժեք» պահանջը և տեխնիկական բնութագիրը թողնել ստորև նշված խմբագրությամբ.

«Դյուրակիր (Ձեռքով կրելու հնարավորությամբ: Պատյանով:), ավտոնոմ լուսատու սարք՝ քննչական գործողությունների կատարման ընթացքում տեղանքի լուսավորության համար: Սարքը հարվածադիմացկուն ջերմապլաստից, ջրակայուն՝ ոչ պակաս IPx5, բոլոր եղանակների կոնստրուկցիայով: Քաշը ոչ ավել քան 12,0 կգ մարտկոցի հետ միասին: Աշխատանքային ռեժիմներ՝ լուսավորության ճառագայթի աշխատանքային անկյունները 1800 - 3600, բարձր լուսավորորության հոսք, ոչ պակաս 10000 լումեն, միջին և ցածր: Լույսի ճառագայթման ջերմաստիճանը 4800 K ոչ պակաս:

Կարգավորվող լուսարձակի բարձրությունը, առնվազն 1,0 - 2,2 մ միջակայքում:

Աշխատանքի ժամանակը, աշխատանքի ռեժիմում, ոչ պակաս քան՝ բարձր՝ 4 ժամ, միջին՝ 6 ժամ, ցածր՝ 18 ժամ: Լիցքավորման մատնանշում. բազմերանգ լուսային դիոդներով, որոնք ապահովում են հետադարձ կապը լիցքավորման վիճակի վերաբերյալ: Մարտկոցի ծավալի մինչև 90% վերալիցքավորում ոչ ավել քան 10 ժամ:

Մարտկոցները լիցքավորելու կարողություն, երբ ուղղակիորեն աշխատում է արտաքին 12 վ էլեկտրամատակարարումից:

Ներառված՝ 12Վ էլեկտրամատակարարումից վերալիցքավորվող լիցքավորիչ:

Ներառված՝ 220Վ փոփոխական լարման ցանցից վերալիցքավորվելու համար նախատեսված լիցքավորիչ:

Երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական կամ մատակարարի սպասարկման կենտրոնում: Հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական

Ապրանքի մատակարարումը, բեռնաթափումը պահեստ իրականացնում է Վաճառողը: Երաշխիքային ժամկետն առնվազն 1 տարի հաշված մատակարարման օրվանից: Մատակարարման փուլում պետք է ներկայացվի արտադրողի կողմից երաշխիքային նամակ կամ համապատասխանության սերտիֆիկատ:»:

Հանձնաժողովը ղեկավարվելով գնումների մասին 40-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև սույն ընթացակարգի հրավերի 1-ին մասի 3-րդ կետի 3.5 ենթակետի պահանջներով, որոշեց.

- ՀՀ ՔԿ ԷԱՃԱՊՁԲ-Լ-24/2 ծածկագրով հրավերում կատարել փոփոխություն վերը նշված խմբագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2.Նիստին ներկա՝հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Վահագն Մկրտչյան

_____ Աննա Թումանյան

_____ Սիլվա Գարանյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան